ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1»

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ աշխատակազմ), որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Արգիշտիի 1 հասցեում, Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 240-Ա որոշմամբ սահմանված հայտարարում է ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ), որն իրականացվում է մեկ փուլով:

Ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել 2026 թվականի համար նախատեսված հանրային սննդի կազմակերպման ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընթացակարգի հրավերը թղթային ստանալու համար անհրաժեշտ է դիմել աշխատակազմին, մինչև ս.թ. **ապրիլի 2-ը, ժամը 11:00-ը:** Ընդ որում, թղթային ձևով հրավեր ստանալու համար աշխատակազմին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Աշխատակազմը ապահովում է թղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Ընթացակարգի առաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 128 սենյակ հասցեով, փաստաթղթային ձևով,

մինչև ս.թ. **ապրիլի 2--ը, ժամը 11:00-ն:**

Հայտերի բացումը տեղի կունենա Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 128 սենյակ հասցեում, **2026 թվականի «ապրիլի 2-ին» ժամը 11:00-ին:**

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել հանձնաժողովի քարտուղար Ի. Եղիազարյանին և հանձնաժողովի անդամ Ա. Մխիթարյանին:

Հեռախոս՝ 011 514-374

011 514-142

Էլ.փոստ՝ irina.eghiazaryan@yerevan.am

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան:

Երևանի քաղաքապետարան

Հ Ր Ա Վ Ե Ր

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ

Ծածկագիրը՝ « ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1»

Հարգելի մասնակից, նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող առաջարկները ենթակա են մերժման:

ՄԱՍ Ի.

Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում հանրային սննդի կազմակերպման ծառայությունների մատուցման նպատակով հայտարարված ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1 ծածկագրով առաջարկների հարցման հրավերի

1. Ընդհանուր տեղեկություն

1.1 **Երևանի քաղաքապետարանը** (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արգիշտիի 1) (այսուհետ՝ Աշխատակազմ), հրավիրում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ Մասնակից) ներկայացնելու առաջարկներ հանրային սննդի կազմակերպման ծառայությունների մատուցման վերաբերյալ՝ **Երևանի քաղաքապետարանի** աշխատակազմի հետ 3 (երեք) տարի ժամկետով պայմանագիր կնքելու նպատակով:

1.2 Սույն հրավերը նպատակ ունի Աշխատակազմի կողմից կազմակերպված առաջարկների հարցման ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող Մասնակիցներին տեղեկացնել ընթացակարգի պայմաններին՝ ընթացակարգի առարկայի, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակել ընթացակարգի շրջանակներում առաջարկի կազմմանը և ներկայացմանը:

1.3 Առաջարկների պատրաստման կարգը նկարագրված է հրավերի II մասում՝ ընթացակարգի առաջարկները պատրաստելու հրահանգում:

2. Ընթացակարգի իրավական կարգավիճակը

2.1 Առաջարկների հարցումը չի հանդիսանում գնում, սակարկություն (մրցույթ, աճուրդ) կամ հրապարակային մրցույթ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-465 և 1043-1047 հոդվածներին համապատասխան և Աշխատակազմը չի կրում պարտավորություններ, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի նշված հոդվածներով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ: Այն հանդիսանում է շուկայում առկա՝ համապատասխան առաջարկների հավաքագրման ընթացակարգ, որի արդյունքում կընտրվի առաջարկներից տնտեսապես առավել շահավետը:

2.2 Մասնակցի առաջարկն ունի օֆերտայի իրավական կարգավիճակ, որը պետք է ներառի տվյալ պայմանագրի բոլոր էական պայմանները և պետք է դիտարկվի Աշխատակազմի կողմից սույն Հրավերի համաձայն: Աշխատակազմի առաջարկները ենթակա չեն հետագա փոփոխությունների, բացառությամբ սույն Հրավերով նախատեսված դեպքերի:

2.3 Առաջարկների հարցման անցկացման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ամրագրում է Կողմերի կողմից ձեռք բերված բոլոր համաձայնությունները:

2.4 Այն բոլոր դեպքերում, որոնք չեն կարգավորվում ընթացակարգի անցկացման մասին հայտարարությամբ և սույն հրավերի փաթեթով, Կողմերը պետք է առաջնորդվեն ՀՀ օրենսդրությամբ:

2.5 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու ընթացակարգի շրջանակներում հանձնաժողովի կողմից կատարված գործողությունները և ընդունած որոշումները:

3. Ընթացակարգի առարկայի բնութագիրը

- ընտրված մասնակցին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու են փաստացի առկա սարքավորումները (շարժական գույք).
- ընտրված մասնակցին Աշխատակազմի կողմից տրամադրվող սարքավորումները և գույքը տրամադրվում են ընդունման-հանձնման ակտով.
- տրամադրվող սարքավորումները (շարժական գույք) վնասելու դեպքում ընտրված մասնակիցը պետք է հատուցի իր կողմից պատճառված բոլոր վնասները՝ ամբողջական ցանկին համապատասխանեցնելու նպատակով.
- անհրաժեշտ հավելյալ գույքը, սպասքը կամ սարքավորումները, պետք է գնվեն ընտրված մասնակցի կողմից.
- մասնակիցները կարող են ներկայացնել հավելյալ ծառայությունների ցանկը (բուսական սնունդ, կոմպլեքս ուտեստներ (combo) և այլն).
- ընտրված մասնակիցը անհրաժեշտության դեպքում պետք է մատուցի 0.5 չափաբաժին.
- ընտրված մասնակիցը պետք է ունենա նաև մեկանգամյա օգտագործման սպասք և սննդի առաքման տարաներ՝ հաճախորդի ցանկությամբ.
- մասնակցի գնային առաջարկը չի կարող պակաս լինել նախահաշվային առավելագույն գնի /յուրաքանչյուր տողի/ 40%-ից.
- ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու դեպքում չափաբաժինները և զուտ քաշը (գրամներով) սահմանվելու են պայմանագրով՝ հայտարարությանը համապատասխան, իսկ գները սահմանվելու են ընտրված մասնակցի ներկայացրած նվազագույն գներով և ենթակա չեն փոփոխման առանց նախապես Աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության հետ համաձայնեցնելու.

- սահմանված պայմանների խախտման դեպքում Աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչությունը սահմանում է թերությունների վերացման ողջամիտ ժամկետ: Նշված ժամանակահատվածում թերությունները չվերացնելու դեպքում, կամ թերությունները 3 անգամ կրկնվելու դեպքում Աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչությունը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը.

- ընտրված մասնակիցն իր հաշվին պետք է ապահովի անձեռոցիկների, կերակրի աղի, պղպեղի և այլ համեմունքների /նաև մեկանգամյա օգտագործման/, ինչպես նաև բուսական յուղի և սոուսների (մայոնեզ, կետչուպ) առկայությունը ճաշարանում.

- Աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչությունը կարող է առաջարկել ճաշացանկ նախապես համաձայնեցնելով ընտրված մասնակցի հետ.

- ընտրված մասնակիցը ճաշացանկը յուրաքանչյուր օր, ըստ քաշի, գնի, բաղադրության, ընթեռնելի տարբերակով պետք է տեղադրի տեսանելի վայրում.

- ընտրված մասնակիցը կարող է հնարավորության դեպքում ընդունել անհատական ճաշատեսակի պատվեր.

- ընտրված մասնակիցը բազային ճաշացանկում չներառված ճաշատեսակների չափաքանակները և գները պետք է նախապես համաձայնեցնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հետ.

- ընտրված մասնակիցը պետք է թույլատրի անարգել հսկելու սույն կետում նշված պահանջների կատարումը և կատարի պայմանագրով սահմանված այլ պահանջները.

- ընտրված մասնակիցը ըստ պատվիրատուի պահանջի Արգիշտի 1 և Փավստոս Բուզանդի 1/3 հասցեներում պետք է ունենա սուրճ պատրաստելու սարք.

- Աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչությունը իրավունք ունի մուտք գործելու սննդի մատուցման կազմակերպման տարածքներ՝ ճաշատեսակների համային, որակական ցուցանիշներին, սանիտարահիգիենիկ պայմաններին, սպասարկման որակին և սույն հրավերում նշված պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով.

- ընտրված մասնակցի կողմից՝ տրամադրվող տարածքի և կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներ չեն իրականացվելու.

- պայմանագիր կնքելուց հետո ընտրված մասնակիցը կունենա եռամսյա փորձաշրջան.

- ընտրված մասնակիցը անհրաժեշտ է ապահովի ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի հ.17-Ն հրամանով նախատեսված հակահամաճարակային կանոնների պահպանումը.

- **կտրականապես արգելվում է ոգելից խմիչքի վաճառքը:**

4. **Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը**

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք առաջարկը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը առաջարկը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը առաջարկով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված գրավոր հայտարարություն:

Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

4.3 Արգելվում է փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների:

4.4 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

4.5 Պայմանագիրը կկնքվի այն մասնակցի հետ, որն ունի առաջարկը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված նմանատիպ մասնագիտական փորձ (անհրաժեշտ է կցել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր՝ պայմանագրեր, համաձայնագրեր):

Մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պետք է ունենա հանրային սննդի մատուցման առնվազն երեք կետ ՀՀ տարածքում, ընդ որում նշված ծառայության մատուցման գործունեությունը պետք է ծավալված լինի ոչ ուշ, քան առաջարկը ներկայացնելու օրվանից վեց ամիս առաջ:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում առնվազն 500 անձի համար, պետական մարմինների (գերատեսչությունների) կամ մասնավոր ընկերությունների տարածքներում իրենց աշխատակիցների և հյուրերի համար, նախատեսված հանրային սննդի կազմակերպման ծառայությունների մատուցված լինելը:

բ. սույն ենթակետով նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը առաջարկով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին իր տվյալների համապատասխանության մասին, որին կցվում են նախկինում կատարված պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները կամ տվյալ գործունեության իրականացման փաստը հիմնավորող այլ փաստաթղթեր:

Գնահատող հանձնաժողովը կարող է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի իսկությունը ստուգել համապատասխան իրավասու մարմիններին հարցում կատարելու և վերջիններից տեղեկատվություն ստանալու միջոցով:

գ. մասնակցի որակավորումն այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

2) Մասնակիցը պետք է ունենա հանրային սննդի կազմակերպման յուրաքանչյուր գործառույթի իրականացման

համար սահմանված որակավորում ունեցող անձնակազմ:
3) Ողջ անձնակազմը պետք է ունենա օրենսդրությանը համապատասխան բժշկական փաստաթղթեր և համապատասխան արտահագուստ:
4) Մասնակցի կողմից ներկայացված ընդհանուր գնային առաջարկն ամենացածրն է հրավերով հրապարակված ճաշացանկի համար:
5) «Աշխատանքային ռեսուրսներ», «Տեխնիկական միջոցներ» և «Ֆինանսական միջոցներ», որակավորման չափանիշները սահմանվում և գնահատվում են հետևյալ կարգով՝
ա. մասնակիցը առաջարկով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների, տեխնիկական և ֆինանսական միջոցների առկայության մասին,
բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:
6) Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է 3 տարի ժամկետով:
7) Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից յուրաքանչյուրի պահանջով՝ առնվազն մեկ ամիս առաջ դրա մասին տեղեկացնելով մյուս կողմին:
8) Պայմանագիր չկնքվելու դեպքում հայտարարությունը վերահրապարակվում է:

5. Հրավերում փոփոխություն կատարելու կարգը

5.1 Առաջարկների ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն մեկ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու մասին հայտարարություն է հրապարակվում կայքում, իսկ Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում առաջարկների ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին հայտարարության հրապարակման օրվանից:

6. Առաջարկների բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը

6.1 Առաջարկների բացումը կկատարվի հանձնաժողովի առաջարկների բացման նիստում սույն թվականի **ապրիլի <u>2-ին, ժամը 11:00-ին:</u>**

6.2 Առաջարկները գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Եթե առաջարկների բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի որակավորման փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ սույն հայտարարության պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում սույն կետում նշված՝

1) առաջարկության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները.

2) առաջարկությունն ուղարկվում է մասնակցի՝ սույն հայտարարության մեջ նշված քարտուղարի էլեկտրոնային փոստից մասնակցի դիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

Եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված

անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

6.3 Եթե առաջարկում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

6.4 Հաղթողի ընտրությունը կկատարվի բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ (Հավելված 2.1)՝ հիմնական կերակրատեսակների ցանկի հանրագումար և բացվածք, ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Եթե ընտրված մասնակիցը հրաժարվում է պայմանագիր կնքելուց կամ զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, ապա Աշխատակազմը պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Գնային առաջարկների հավասարության դեպքում, ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կկազմակերպվեն միաժամանակյա բանակցություններ:

7. Պայմանագրի կնքումը

7.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Աշխատակազմի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, 3 (երեք) տարի ժամկետով:

7.2 Պայմանագիրը կկնքվի այն մասնակցի հետ՝

1) որն ունի հանրային սննդի կազմակերպման յուրաքանչյուր գործառույթի իրականացման համար սահմանված որակավորում ունեցող անձնակազմ,

1) որի ողջ անձնակազմն ունի օրենսդրությանը համապատասխան բժշկական փաստաթղթեր և համապատասխան արտահագուստ,

2) որի կողմից ներկայացված ընդհանուր գնային առաջարկն ամենացածրն է հրավերով հրապարակված ճաշացանկի համար:

7.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը տրամադրվում է էլեկտրոնային եղանակով:

7.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 3 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

7.5 Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը Աշխատակազմին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է Աշխատակազմի փաստաթղթաշրջանառության համակարգում:

8. Ընթացակարգը չկայացած հայտարարելը

8.1 Հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

- առաջարկներից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- դադարում է գոյություն ունենալ պահանջը.
- ոչ մի առաջարկ չի ներկայացվել.
- պայմանագիր չի կնքվում:

9. Այլ դրույթներ

9.1 Մասնակիցներն ինքնուրույն են հոգում առաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված ծախսերը, և Աշխատակազմը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ գործընթացի ընթացքից և արդյունքներից:

9.2 Աշխատակազմն ապահովում է մասնակիցներից ստացած բոլոր տեղեկությունների, այդ թվում մասնակիցների կողմից ներկայացված առաջարկով տրամադրված տեղեկությունների գաղտնիությունը: Տվյալ տեղեկությունների տրամադրումն այլ մասնակիցներին կամ երրորդ կողմին հնարավոր է միայն ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

ՄԱՍ II

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ը Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ ՈՒ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին գործընթացի առաջարկը պատրաստելիս:

1.2. Մասնակիցների կողմից ներկայացված առաջարկները (ներառվող բոլոր փաստաթղթերը) պետք է կազմված լինեն հայերեն:

2. Ընթացակարգի առաջարկը

2.1 Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը սահմանված կարգով ներկայացնում է առաջարկ: Առաջարկը ներառում է սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները): Մասնակիցը առաջարկով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

2.1.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի՝ կցելով սույն հրավերի 1-ին մասի 4.5 կետով նախատեսված

որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող՝ սույն հրավերով պահանջվող փաստաթղթերը.

2.2. Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

2.3 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

2.4 Սույն հրահանգի բոլոր այն փաստաթղթերը, որոնք կնքվում և ստորագրվում են մասնակցի կողմից (ստորագրությունը պետք է լինի մասնակցի ղեկավարինը կամ նրա կողմից լիազորված անձինը՝ կցելով համապատասխան լիազորագիր), ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք պահանջվել են կնքված և ստորագրված տրամադրողի կողմից, պետք է կնքված և ստորագրված լինեն բնօրինակով, բացառությամբ սույն հրահանգի 2.3 կետում նշված դեպքերի:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկը

Մասնակիցների կողմից ներկայացված գնի հաշվարկը պետք է ներառի մասնակցի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը:

3.1. Ընթացակարգի գնային առաջարկի ներկայացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

3.2 Գնի վերաբերյալ առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել սույն հրավերի հավելված 2-ով նախատեսված տեսքով:

4. Առաջարկները պատրաստելու կարգը

4.1. Մասնակիցը առաջարկը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող բոլոր փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է այն ներկայացնողի ղեկավար մարմնի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և առնվազն 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Եթե առաջարկը ներկայացնում է մասնակցի ղեկավար մարմնի կողմից լիազորված անձը, ապա ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

4.2. Սույն հրահանգի 4.1 կետում նշված ծրարի վրա առաջարկը կազմելու լեզվով նշվում են՝

ա) Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1,

բ) Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1»

գ) «Չբացել մինչև առաջարկերի բացման նիստը» բառերը.

դ) Մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

4.3. Առաջարկները պետք է ներկայացվեն մինչև **2026թ ապրիլի 2-ը, ժամը 11:00-ն**, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1 հասցեում, հանձնաժողովի նիստում, աշխատակազմի գնումների վարչության 128 սենյակում հանձնաժողովի քարտուղար Իրինա Եղիազարյանին:

4.4. Սույն կետի 4.1 և 4.2 ենթակետերի պահանջներին չհամապատասխանող առաջարկները գնահատող հանձնաժողովն առաջարկների բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

5. Առաջարկների բացումը և գնահատումը

5.1. Առաջարկերի բացումը կկատարվի հանձնաժողովի կողմից՝ 2026թ ապրիլի 2-ին, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1 հասցեում, հանձնաժողովի նիստում, աշխատակազմի գնումների վարչության 128 սենյակում:

5.2. Առաջարկերի բացման նիստում հրապարակվում են.

1) առաջարկ ներկայացրած յուրաքանչյուր Մասնակցի անվանումը (անունը),

2) տեղեկություններ՝ առաջարկներ պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ սույն հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ,

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ,

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին,

5) յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը:

5.3. Առաջարկերը բացվելուց հետո հանձնաժողովի կողմից կազմվում է արձանագրություն: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է.

1) տեղեկություն առաջարկերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) առաջարկեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ ընթացակարգի առաջարկերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

12) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

6. Պայմանագրի կնքումը

6.1. Պայմանագիրը կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Աշխատակազմի կողմից:

6.2. Ընտրված մասնակից հայտարարվելուց երկու օրացուցային օրվա ընթացքում Աշխատակազմը ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

6.3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 3 օրացուցային օրում չի ստորագրում պայմանագիրը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Այդ դեպքում Աշխատակազմը պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացնում ընթացակարգում երկրորդ, իսկ վերջինիս կողմից առաջարկը չընդունվելու դեպքում՝ երրորդ և հաջորդական տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Հավելված 1

«ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1» ծածկագրով
առաջարկների հարցման

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

առաջարկների հարցման մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1» ծածկագրով հայտարարված առաջարկների հարցմանը և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

_____ռեզիդենտ:
երկրի անվանումը

_____-ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____:
մասնակցի անվանումը հարկի վճարողի հաշվառման համարը

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____:
մասնակցի անվանումը էլեկտրոնային փոստի հասցեն

_____ -ի հեռախոսահամարն է՝ _____:
մասնակցի անվանումը հեռախոսահամարը

_____ -ի գործունեության հասցեն է՝ _____:
մասնակցի անվանումը

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանում

1) բավարարում է «ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1» ծածկագրով առաջարկների հարցման

հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և կից ներկայացնում է նույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով պահանջված փաստաթղթերը.

2) «ԵՔ-ՀԱԿԾՄ-26/1» ծածկագրով առաջարկների հարցման մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ -ին
մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) -ի
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս
-ին
մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

Ստորև ներկայացնում է -ի իրական շահառուների վերաբերյալ
մասնակցի անվանումը

տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ ----------**

_____ _____

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրություն

Կ.Տ.

_____2026թ.

(ամսաթիվը, ամիսը)

.

Հավելված 2

«ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1» ծածկագրով
առաջարկների հարցման

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով «ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1» ծածկագրով առաջարկների հարցման հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով:

Հ/Հ	Ծառայության անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Հանրային սննդի կազմակերպման ծառայություններ			

Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ ծառայությունների համար առաջարկվող ընդհանուր գումարով, ընդ որում Հավելված N 2-ում լրացվում է Հավելված 2.1-ի ընդամենը տողում ստացվող գումարը: Հավելված 2.1 պարտադիր լրացվում և կցվում է Հավելված 2-ին:

_____ _____

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը,անուն ազգանունը)

ստորագրություն

Կ.Տ.

_____2026թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2.1

«ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1» ծածկագրով
առաջարկների հարցման

ՑԱՆԿ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ

N	Կերակրատեսակ	Բաղադրություն	Չափման միավոր	Նախահաշվային առավելագույն գին /ՀՀ դրամ/	Առաջարկվող գին /ՀՀ դրամ/
1	**Հաց**				
2	Հաց, սպիտակ քունջութով		50 գ.	70	
3	Սև հաց		35 գ.	40	
4	Լավաշ		50 գ.	70	
5	Հաց		50 գ.	50	
	Սառը նախուտեստ				
1	Աղցան Մայրաքաղաքային	տավարի միս, գազար, կարտոֆիլ, ոլոռ, ձու, թթվասեր, մայոնեզ, թթու վարունգ, համեմունք	120 գ.	520	
2	Աղցան Վինեգրեդ	բազուկ, լոբի, կարտոֆիլ, թթու վարունգ, գազար, կանաչի	120 գ.	310	
3	Աղցան Թաբուլե	բլղուր, տոմատ, մառոլ, կանաչ սոխ, լոլիկ, մաղադանոս, լիմոն, համեմունք	120 գ.	310	
4	Աղցան Մառոլով	մառոլ, համեմ, բողկ, համեմունք	120 գ.	310	
5	Աղցան բազուկով	բազուկ, թթվասեր, ընկույզ, մայոնեզ, սամիթ, հբամեմունք	120 գ.	420	
6	Աղցան Կորեական գազար	գազար, համեմունքներ	120 գ.	370	
7	Աղցան բանջարեղենային	կաղամբ, գազար, ձեթ	120 գ.	270	
8	Աղցան կարմիր լոբով	կարմիր լոբի, վարունգ, գազար, պղպեղ, համեմունք	120 գ.	370	
9	Տավարի փափկամսով	տավարի միս, նուռ, ընկույզ, կանաչի, թթվասեր, մ այոնեզ	120 գ.	690	
10	Ավոկադո գետնանուշով	ավոկադո, սպանախ, բազիլիկ, մարոլ, մեղր, գետնանուշ, կիտրոնի հյութ, զեյթունի ձեթ, նանա, համեմունքներ	150 գ.	1250	
11	Կեսար	հավի կրծքամիս, սխտոր, մառոլ, լոլիկ, պանիր, չորահաց, սոուս	150 գ.	780	
12	Ելակով, ռոկֆորով	ելակ, կիվի, սպանախ, նուշի քերուկ, պանիր ռոկֆոր, բալզամիկ քացախ, համեմունքներ	150 գ.	950	
13	Ռուկոլայով աղցան	Ռուկոլա, լոլիկ, բալզամիկ քացախ, նարշարաբ, քունջութ	150 գ.	750	

14	Վիտամին 6	Բրոկոլի, լոլիկ, վարունգ, նարշարաբ, զեյթուն, կաղամբ, ֆետա, օրեգանո	150 գ.	480	
15	Աղցան պղպեղով, ֆիլեով	խոզապուխտ, պղպեղ, համեմ, թթվասեր, մայոնեզ	120 գ.	580	
16	Տավարի միս կորեական ձևով	տավարի փափկամիս, բուլղարական պղպեղ, մանանեխ, վարունգ, գազար, քունջութ, սոյայի սոուս, համեմունքներ	150 գ.	920	
17	Աղցան ֆունչոզա հավի մսով	հավի կրծքամիս, ֆունչոզա, բուլղարական պղպեղ, բրոկոլի, իմբիր, մեղր, գազար, սոյայի սոուս, համեմունքներ	150 գ.	980	
18	Աղցան տավարի մսով, մանուշակ կաղամբով	տավարի միս, շամպինյոն, մանուշակ կաղամբ, սուլուգունի, մարինադ վարունգ, չերրի, թթվասեր	120 գ.	680	
19	Հավի մսով, բազուկով տորթ	բազուկ, նուռ, հավի կրծքամիս, քամած մածուն, ընկույզ, մայոնե, կանաչի	150 գ.	680	
20	Սպանախով, ընկույզով աղցան	սպանախ, ընկույզ, նուռ, սամիթ, թթվասեր	120 գ.	370	
	Առաջին կերա-կրատեսակներ				
1	Բորշ	կարտոֆիլ, կաղամբ, գազար, բազուկ, սոխ, կանաչի, տոմատ, համեմունք	450 գ.	470	
2	Բորշ մսով	կարտոֆիլ, կաղամբ, գազար, բազուկ, սոխ, կանաչի, տոմատ, համեմունք, տավարի միս	450 գ.	750	
3	Խարչո	բրինձ, ձավար, տավարի միս, կարտոֆիլ, սխտոր, տղեմալի, համեմունք	450 գ.	790	
4	Սոլյանկա	տավարի միս, խոզապուխտ, հավի միս, զեյթուն, բաստուրմա, լիմոն, սոխ, նրբերշիկ, համեմունք	450 գ.	950	
5	Բրնձով ապուր	բրինձ, կարտոֆիլ, գազար, կանաչի, սոխ, համեմունք	450 գ.	390	
6	Դեղին ոլոռով ապուր	ոլոռ, կարտոֆիլ, գազար, սոխ, տոմատ, համեմունք	450 գ.	390	
7	Մակարոնով ապուր	կարտոֆիլ, մակարոն, գազար, արգանակ, կանաչի, սոխ, համեմունք	450 գ.	390	
8	Ոսպով ապուր	կարտոֆիլ, ոսպ, գազար, սոխ, տոմատ, համեմունք	450 գ.	450	
9	Կարմիր լոբով ապուր	կարտոֆիլ, կարմիր լոբի, գազար, արգանակ, սոխ, տոմատ, համեունք	450 գ.	550	
10	Սպաս	մածուն, ձավար, կանաչի	450 գ.	450	
11	Ավելուկով ապուր	ավելուկ, կարտոֆիլ, բլղուր, գազար, սոխ, տոմատ, համեմունք, կանաչի	450 գ.	480	
12	Աջաբսանդալ	սմբուկ, լոլիկ, պղպեղ, սոխ, կարտոֆիլ, կանաչի	450 գ.	570	
13	Տարոնի ապուր	հավի միս, գազար, սոխ, նեխուր, կարագ, լիմոն, ձու, ձավար	450 գ.	550	
14	Էզոգելին	բրինձ, բլղուր, կարմիր ոսպ, տոմատ, նանա, մաղադանոս, ձեթ	450 գ.	450	

15	Մամպառ	հավ, սոխ, սխտոր, գազար, կարտոֆիլ, պղպեղ, լոլիկ, տոմատ, կծու պղպեղ, նեխուր, թաթար բորակի	450 գ.	570	
16	Տոպչետա	հավ, բրինձ, սոխ, կարտոֆիլ, ալյուր, ձու, նեխուր, պղպեղ, մաղադանոս	450 գ.	570	
17	Սպանախով կրեմ-ապուր	սպանախ, մաղադանոս, կարտոֆիլ, ալյուր, կարագ, ձեթ, սերուցք, սխտոր	450 գ.	750	
18	Դդումով, տավարի մսով ապուր	դդում, տավարի միս, կարտոֆիլ, պղպեղ, տոմատ, ձեթ	450 գ.	850	
19	Չխրթմա	հավի միս, սխտոր, կարագ, ձու, համեմ	450 գ.	790	
20	Հունական ապուր	ձեթ, կարագ, կարտոֆիլ, սպիտակ լոբի, աջիկա, ծիծակ, լոլիկ, գազար	450 գ.	570	
21	Լոբախաշու	սոխ, տոմատ, կարմիր լոբի, բլղուր, կանաչի	450 գ.	390	
22	Ապուր Տոմյամ	ծովախեցգետին 16/20, հավի կրծքամիս, չերրի լոլիկ, կախասունկ, շամպինյոն, չորացրած սունկ, տոմյանի մածուկ, սոուս ֆիշ, պղպեղ կանաչ կծու, կաթ, համեմունքներ	350 գ.	1750	
23	Սնկով կրեմ-ապուր	շամպինյոն, կախասունկ, կարագ զելանդական, սերուցք, համեմունքներ	350 գ.	1200	
	Երկրորդ կերա-կրատեսակներ				
1	Շոգեխաշած տավարի միս		110 գ.	890	
2	Խոզի ժարկո կարտոֆիլով	խոզի միս, կարտոֆիլ, սոխ, համեմունք	350 գ.	1100	
3	Տավարի կոտլետ	տավարի միս, սոխ, հաց, կանաչի, պաքսիմաստ	110 գ.	690	
4	Տավարի գուլյաշ	տավարի միս, կանաչի, համեմունք, տոմատ, ալյուր, թթվասեր	220 գ.	1250	
5	Տավարի լանգետ	տավարի միս, համեմունք	110 գ.	1250	
6	Տժվժիկ	սիրտ, թոք, սոխ, համդեմունք, կանաչի	220 գ.	670	
7	Մակարոն նավատորմային	տավարի միս, սոխ, մակարոն, կանաչի	250 գ.	670	
8	Գառնի Յարախ	տավարի միս, սոխ, սմբուկ, կանաչի, լոլիկ, համեմունք	250 գ.	950	
9	Հավի բուդ տապակած	հավի բուդ, համեմունք, բուսայուղ	130 գ.	620	
10	Քյուֆթա	տավարի միս, սոխ, ալյուր, կոնյակ, կարագ, համեմունք	100 գ.	780	
11	Խաշած իշխան		150 գ.	1500	
12	Նրբերշիկ		1 հատ	230	
13	Խոզի Էսկալոպ	խոզի միս, սուլուգունի, սունկ	110 գ.	890	
14	Հարիսա	ձավար, հավի միս, կարագ, համեմունք	350 գ.	750	
15	Իռլանդական ռագու	տավարի միս, տոմատ, սոխ, գարեջուր, կարտոֆիլ, կարագ, մաղադանոս	350 գ.	1300	

16	Հարսանեկան ժարկո	խոզի միս, կարտոֆիլ, կաղամբ, պղպեղ, տոմատ, զիռա, համեմ	350 գ.	1150	
17	Շանհայական հավ	հավի միս, սխտոր, ադանա, անիսոն, զիռա, կետչուպ, համեմ, կծու պղպեղ, կարտոֆիլ, սոյայի սոուս	350 գ.	1100	
18	Բիֆստրոգանով ֆրիով	տավարի միս, սոխ, թթվասեր, տոմատ, ալյուր, կարտոֆիլ	250 գ.	1100	
19	Վին Դալու	տավարի միս, բրինձ, ծիծակ, շաֆրան, տոմատ, մաղադանոս, քիմիոն	350 գ.	1150	
20	Սպանախով լցոնած լոլիկ	սպանախ, լոլիկ, կարագ, սուլուգունի	350 գ.	450	
21	Կորեական սոուս արիշտայով	հավի միս, արիշտա, կարտոֆիլ, գազար, կետչուպ, կանաչ սոխ, մեղր, սոյա	350 գ.	1050	
22	Մեքսիկական կարտոֆիլ ֆիլեով	կարտոֆիլ, զիռա, սվանական աղ, խոզապուխտ	350 գ.	1050	
23	Թաթար բորակի հավի մսով	թաթար բորակի, հավի միս, մածուն, կարագ	350 գ.	870	
24	Վրացական փլավ	բրինձ, հավի թևիկ, կարագ, ռեհան	350 գ.	870	
25	Խոզի լանգետ բեկոնով, մոցարելլայով	Խոզի վզի միս, բեկոն, կարագ զելանդական, պանիր մոցարելլա, ձու, մեղր, սոյայի սոուս, կետչուպ, մանանեխ, համեմունքներ	140 գ.	1650	
26	Հավի կրծքամիս ֆետայով	հավի կրծքամիս, ձու, պանիր ֆետա, պանիր մոցարելլա, սոյայի սոուս, սերուցք, համեմունքներ	150 գ.	1450	
27	Հյութալի տավարի միս կանաչիներով	տավարի փափկամիս, մաղադանոս, համեմ, սամիթ, կանաչ սոխ, թարխուն, տղեմալի, համեմունքներ	150 գ.	1650	
28	Տավարի մսով տորտիլյաի զամբյուղ	տավարի փափկամիս, պանիր ֆենդել, լոլիկ չերրի, կարմիր լոբի, թթվասեր, մարոլ, պղպեղ կանաչ կծու, լոշիկ, կիտրոն, համեմ, կանաչ սոխ, համեմունքներ	350 գ.	1550	
	Խավարտ				
1	Հնդկաձավար	հնդկաձավար, բուսայուղ	200 գ.	420	
2	Բրինձ	բրինձ, բուսայուղ	200 գ.	420	
3	Բրինձ ոսպով	բրինձ, ոսպ, բուսայուղ	200 գ.	520	
4	Բրինձ գազարով	բրինձ, գազար, բուսայուղ	200 գ.	520	
5	Սպագետի	սպագետի, բուսայուղ	200 գ.	420	
6	Մակարոն	մակարոն, բուսայուղ	200 գ.	380	
7	Տապակած կանաչ լոբի ձվով	կանաչ լոբի, ձու, կարագ, կանաչի	250 գ.	690	
8	Հաճար	հաճար, սոխ, բուսայուղ	250 գ.	420	
9	Հաճար կախասնկով	հաճար, կախասունկ, սոխ, բուսայուղ	250 գ.	580	
10	Դեղին ոլոռի խյուս	դեղին ոլոռ, կարագ, սամիթ	350 գ.	480	
11	Լոլիկով ձվածեղ	լոլիկ, ձու. կանաչի, բուսայուղ	250 գ.	650	

12	Ջեռոցի կարտոֆիլ	կարտոֆիլ, բուսայուղ, համեմունք	250 գ.	480	
13	Կարտոֆիլի խյուս	կարտոֆիլ, կարագ, համեմունք	350 գ.	580	
14	Ձինթոյ Մոգո	կախասունկ, նեխուր, գազար, գունավոր պղպեղ	250 գ.	890	
15	Արքայական կուսկուս հավի մսով	բլղուր, հավ, գազար, դդում, նեխուր, պղպեղ, դարչին,	250 գ.	560	
16	Ֆետուչինի արաբիատա	սպագետի, սխտոր, լոլիկ, տոմատ, օրեգանո, շաքարավազ, սուլուգունի, մաղադանոս	250 գ.	650	
17	Ալու Մասալա	սոխ, սխտոր, պղպեղ, ծաֆրան, տոմատ, թթվասեր, լոլիկ, կարտոֆիլ	250 գ.	650	
18	Ջեռեփուկ Ժոզեֆինա	կարտոֆիլ, սուլուգունի, կարագ, շամպինյոն	200 գ.	750	
19	Մակարոն կախասնկով	մակարոն, կախասունկ, գազար, սամիթ	250 գ.	550	
20	Թաթար բորակի վրացական սոուսով	թաթար բորակի, վրացական սոուս	250 գ.	450	
21	Հաճար տհալով	հաճար, սոխ, տավարի միս, կարագ	250 գ.	650	
22	Հնդկաձավար նրբերշիկով	հնդկաձավար, նրբերշիկ, կարագ, ձեթ	250 գ.	520	
23	Շակշուկա	սոխ, պղպեղ, կարագ, լոլիկ, ձու	250 գ.	650	
24	սպագետտի բեկոնով, լոլիկով	Սպագետտի, կարագ զելանդական, բեկոն, չերրի լոլիկ, բազիլիկ, համեմունքներ	250 գ.	1200	
25	Անտառային սնկեր	կախասունկ, շամպինյոն, կարագ զելանդական, սոխ, սերուցք, համեմունքներ	250 գ.	1350	
26	Լազանյա կոլոլակներով	պաստա լազանյա, տավարի փափկամիս, պանիր պարմեզան, սոխ, լոլիկ, պղպեղ, բազիլիկ, համեմունքներ	250 գ.	1350	
27	Բուլղարական լոբի ծնեբեկով	ծնեբեկ, բուլղարական լոբի, ձու, սամիթ, կարագ զելանդական, համեմունքներ	250 գ.	1750	
28	Ոսպով Մշոշ	սոխ, ոսպ, սալորաչիր, ընկույզ, կանաչի	250 գ.	650	
	Բուտերբրոդներ				
1	Խոզապուխտով սենդվիչ	հաց, խոզապուխտ, հավելում	1 հատ	750	
2	Չիզբուրգեր տավարի կոտլետով	տավարի կոտլետ, հաց, հավելում	1 հատ	1150	
3	Չիզբուրգեր հավի կոտլետով	հավի կոտլետ, հաց, հավելում	1 հատ	950	
4	Քլաբ սենդվիչ խոզապուխտով	ֆիլե, տոստի հաց, պանիր, լոլիկ, վարունգ	1 հատ	890	
5	Սենդվիչ բեկոնով	հաց, բեկոն, պանիր, հավելում	1 հատ	950	
6	Չիաբատտա խոզապուխտով	չիաբատտա, խոզապուխտ, պանիր, վարունգ, լոլիկ, լետուս	1 հատ	1350	
7	Չիաբատտա տավարի մսով	չիաբատտա, տավարի միս, պանիր, կանաչ սոխ, թթու ծիծակ, լետուս	1 հատ	1750	
8	Սենդվիչ բժշկական երշիկով	հաց, երշիկ, պանիր, լոլիկ, վարունգ, լետուս	1 հատ	550	

9	Կրուասան պիկանտ երշիկով	կրուասան, երշիկ պիկանտ, պանիր ֆենդել, լետուս, լոլիկ, վարունգ	1 հատ	1250	
	Ըմպելիքներ				
1	Հանքային ջուր		500 մլ	280	
2	Բնական ջուր		500 մլ	250	
3	Բնական հյութ		200 մլ	450	
4	Կոլա, ֆանտա, Սփրայթ		500 մլ	480	
5	Լիմոնադ		500 մլ	250	
6	Կոմպոտ		220 մլ	250	
7	Թան		220 մլ	350	
8	Մածնաբրդոշ		220 մլ	450	
	Տաք ըմպելիքներ				
1	Թեյ		200 մլ	250	
2	Սուրճ սև		80 մլ	250	
3	Տաք շոկոլադ		200 մլ	450	
4	Մակ սուրճ		180 մլ	350	
5	Լուծվող սուրճ		180 մլ	400	
	Խմորեղեններ				
1	Իդեալ		1 հատ	690	
2	Էկլեր		1 հատ	450	
3	Միկադո		1 հատ	550	
4	Գաթա		1 հատ	250	

* Ստացվող ընդհանուր թիվը լրացվում է Հավելված N 2-ում:

Նշված ծառայությունները հանդիսանում են որպես մեկ չափաբաժին: Հաճախորդի ցանկությամբ կարող է տրամադրվել նաև 0.5 չափաբաժին:

** Բոլոր տողերով գնային առաջարկ ներկայացնելը պարտադիր է, եթե լինեն չլրացված կամ նախահաշվային գները գերազանցող կամ նախահաշվային գներից 40 տոկոս ցածր առաջարկող տողեր, ապա գնային առաջարկը կմերժվի:

Սույն հավելվածը պարտադիր լրացվում է մասնակցի կողմից և ներկայացվում է Հավելված N 2-ի հետ միասին:

Հավելված 3

«ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1»
ծածկագրով
առաջարկների
հարցման

ՑԱՆԿ
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՒՅՔ

ՀՀ	**Անվանում**	**քանակ**
1	Սառնարան Aldiwan	1
2	Ջեռուցիչ Aldiwan	1
3	Սեղան մետաղյա Aldiwan	1
4	Կարտոֆիլի կտրիչ	1
5	Օդակարգավորիչ Aermec	3
6	Սեղան	14
7	Աթոռ մետաղական	70
8	Սեղան մետաղյա	6
9	Խոհանոցային դարակ մետաղյա/սեղան սառնարան դարակներով/	1
10	Լվացարան մետաղյա երկտեղանոց Aldiwan	1
11	Լվացարան մետաղյա	1
12	Մատուցարան մետաղյա	1
13	Ծխատար	1
14	Խոհանոցային դարակ մետաղյա EKIP	7
15	Ջերմային սենսորներ	10
16	Լուսանկար «Երևանի քաղաքապետարան»	1
17	Լուսանկար «Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի»	1
18	Լուսանկար «Արարատ լեռ»	1
19	Լուսանկար «Մետրոպոլիտեն»	1

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

«ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1

ք. _____ «____» _____ 20 թ.

«_____», ի դեմս ---------- -ի, որը գործում է -----
-
------- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Աշխատակազմ), մի կողմից, և ----------
------ն, ի դեմս տնօրեն ----------ի, որը գործում է ---------- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Աշխատակազմը հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հանրային սննդի կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Աշխատակազմն իրավունք ունի՝

2.1.1 Աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման ծառայությունը իրավունք ունի մուտք գործելու սննդի մատուցման կազմակերպման տարածքներ՝ ճաշատեսակների համային, որակական ցուցանիշներին, սանիտարահիգիենիկ պայմաններին, սպասարկման որակին և պայմանագրով նախատեսված պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր- ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Աշխատակազմը պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.3 Կատարողը պարտավոր է՝

2.3.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով և N 2 հավելվածով սահմանված գներով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.3.2 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Աշխատակազմին:

2.3.3 Տրամադրված սարքավորումները (շարժական գույք) վնասելու դեպքում հատուցել իր կողմից պատճառված բոլոր վնասները՝ ամբողջական ցանկին համապատասխանեցնելու նպատակով:

2.3.4 Ողջամիտ ժամկետում իր ուժերով և իր հաշվին վերացնել սննդի կազմակերպման ծառայությունների մատուցման տարածքների (ճաշարանի տարածք, բուֆետի տարածք, խոհանոցի տարածք, պահեստային տարածք, սանհանգույց և այլն) շահագործման ընթացքում առաջացած թերությունները:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

3.2 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է երեք տարի ժամկետով:

5.2 Կատարողի կողմից՝ տրամադրված տարածքի և կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներ չեն իրականացվում:

5.3 Կատարողին՝ փաստացի առկա սարքավորումները (շարժական գույք) տրամադրվում են անհատույց օգտագործման իրավունքով:

5.4 Հավելյալ գույքի, սպասքի կամ սարքավորումների անհրաժեշտության դեպքում, դրանք տրամադրվում են Կատարողի կողմից:

5.5 Աշխատակազմը կարող է առաջարկել ճաշացանկ նախապես համաձայնեցնելով Կատարողի հետ:

5.6 Պայմանագիր կնքելուց հետո սահմանվում է երեքամսյա փորձաշրջան:

5.7 Կատարողը.

- անհրաժեշտության դեպքում պետք է մատուցի 0.5 չափաբաժին, ինչպես նաև պետք է ապահովի մեկանգամյա օգտագործման սպասք և սննդի առաքման տարաններ՝ հաճախորդի ցանկությամբ:
- պետք է ապահովի անձեռոցիկների, կերակրի աղի, պղպեղի և այլ համեմունքների /նաև մեկանգամյա օգտագործման/, ինչպես նաև բուսական յուղի և սոուսների (մայոնեզ, կետչուպ) առկայությունը ճաշարանում.
- Աշխատակազմի հետ համաձայնեցված ճաշացանկը յուրաքանչյուր օր, ըստ քաշի, գնի,

բաղադրության, ընթերնելի տարբերակով պետք է տեղադրի ճաշարանում՝ տեսանելի վայրում:

- հնարավորության դեպքում կարող է ընդունել անհատական ճաշատեսակի պատվերներ.

5.8 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության արդյունքում արձանագրվում է, որ գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Աշխատակազմն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու

պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Աշխատակազմն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Աշխատակազմի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

5.9 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

5.10 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի կամ Աշխատակազմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Աշխատակազմի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 30 օրացուցային օր առաջ:

5.11 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Աշխատակազմ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

5.12 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից յուրաքանչյուրի պահանջով՝ առնվազն մեկ ամիս առաջ դրա մասին տեղեկացնելով մյուս կողմին:

5.13 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Աշխատակազմը փոստի միջոցով, պատվիրված նամակով, առաքում է Կատարողին: Եթե վերջինս ստորագրում և ստանում է նամակը, համարվում է պատշաճ ծանուցված:

5.14 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

5.15 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր

կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

5.16 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	ԿԱՏԱՐՈՂ
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1

« » 20 թ. կնքված

«ԵՔ-ՀՍԿԾՄ-26/1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության				
Հանրային սննդի կազմակերպման ծառայությունների				
ՀՀ	**անվանումը**	**տեխնիկական բնութագիրը**	**մատուցման**	
			հասցեն	**ժամկետը**
1	Հանրային սննդի կազմակերպման ծառայություններ	Հանրային սննդի կազմակերպման ծառայությունների մատուցումը Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի 1 հասցեում գտնվող ճաշարանում /ընդհանուր, մակերեսը 212.03 մ^2, որն իր մեջ ներառում է 111.66 մ^2 սպասարկման սրահ, 39.34 մ^2 խոհանոց, 34.51 մ^2 նկուղ և 26.52 մ^2 սրճարան/: • ճաշարանում մատուցվող սնունդն ու ըմպելիքները պետք է պատրաստված լինեն բացառապես թարմ մթերքներից, համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր նորմերին. • տաք (սառը) մսային ուտեստները պետք է պատրաստված լինեն թարմ տեղական (չներկրված) մսից. • յուրաքանչյուր օր մատուցվող մսային ճաշատեսակները պետք է լինեն ոչ պակաս, քան 10 տեսակի (ճաշացանկը պետք է փոփոխվի յուրաքանչյուր օր). • սնունդը մատուցվում է բաց բուֆեի/պահարանի վրա շարված՝ ճաշարանի աշխատակցի օգնությամբ. • յուրաքանչյուր օր մատուցվում է հիմնական ճաշատեսակներից առնվազն 20 միավոր՝ պայմանագրով սահմանված գները չգերազանցող գներով. **ճաշարանի աշխատանքային ժամերն են՝**	**ՀՀ, ք.Երևան, Արգիշտիի 1**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ քան 10-րդ օրը /ոչ աշխատանքային օր լինելու դեպքում հաջորդող աշխատանքային օրը/ – 36 ամիս ժամկետով:**

		աշխատանքային օրերին՝ • ժամը 09:00-ից մինչև 18:00-ը, **սրճարանի աշխատանքային ժամերն են՝** աշխատանքային օրերին՝ • ժամը 09:00-ից մինչև 18:00-ը, Հանրային սննդի կազմակերպման ծառայությունների մատուցումը իրականացվում է մոտ 500 անձի համար:		

• Կատարողն պետք է ապահովի ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի հ.17-Ն հրամանով նախատեսված հակահամաճարակային կանոնների պահպանումը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	**ԿԱՏԱՐՈՂ**
---	---
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ